

ԲԱՅՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա

Տարեկ. 10 ֆր.

Չվեցամս. 5

Արտամահման


Տարեկ. 12 ֆր.

Չվեցամս. 6

Ամերիկա

2 Տոլ. 30 սենդ

ԿԱՆԻՍԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ

DIRAN

PAPAZIAN

YILDIZ TABIA

VARNA

BULGARIE

ՇԱՐԲԱԹԱՅԱՆԴԵՍ . ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

— Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

Ե. ՏԱՐԻ

— ՄԱՐՏ. 10 ՇԱՐԲԱԹ 1901 —

ԹԻԻ 203

ՈՐԲԱԽՆԱՄԻ ՍԽԱԼ ԲԱՅԼԸ

Կը ցաւինք որ Վառնայի Որբախնամի Գործադիր Ժողովը ամեն ողջախոհ ազգայնոց և Պուլկարահայ ժամլոյն ըրած արդարացի միահամուռ դիտողութեանց հակառակ, ի փաստ Ազգ. Հիւանդանոցի, իր սիկարի թուղթը հրապարակէն չի վերցնելու այլ ինքզինքը արդարացնելու համար հետեւեալ անհրաժարանալի փաստերը մէջ կը բերէ.

Ա. «Որբախնամն նկատեց որ տարեկան առաջ Հիւանդանոցի քողորջ չէր Ազգ. սեփականութիւնն».

Ով ըսաւ. 1894էն ի վեր Ազգ. Հիւանդանոցը սիկարի թուղթը իբր իր սեփականութիւնը հրապարակ հանած է և ասիկա կը հաստատուի այսօր իսկ Հիւանդանոցի թուղթի կողքին ու մէջի մանր տառերով տպուած 1894էն մինչև 1899 ՎԵՑ ՏԱՐԻՆԵՐՈՒ բաղդատական հաշուեցուցակովը:

Բայց երբ նոյն իսկ Հիւանդանոցի թուղթը նոյն հաստատութեան սեփականութիւնը եղած չըլլար, դարձեալ Որբախնամին ընթացքը անարդարանալի պիտի մնար, քանի որ այդ պարագային մէջ ալ Հիւանդանոցը թղթի սպառումէն չահ պիտի ունենար, որուն պիտի փասէր մեր Որբախնամը:

Բ. «Որբախնամի սիկարի քողորջն Հայ տարեկան աւելի Պուլկար եւ օտարազգիներու մէջ ապառու գտնելը դրապէս եւ փորձառաքաւ մեզ հաւաստողներ ալ չեն պահիր».

Բայց պէտք է նկատողութեան առնենք թէ այսօր Պուլկարիոյ մէջ Պուլկար տարրը ունի իր եունափի թուղթը, Յոյն իր Հիւանդանոցինը և Փարիսը, ասոնցմէ զատ կան Գուրպա և այլ տեսակ թուղթեր որոնք կը սպառին ահագին քա-

նակութեամբ, հետեւեալ Որբախնամի այս մէջ ըրած փաստը թէ «օտարազգիներու մէջ աւելի սպառում պիտի գտնէ», ջուրը կիյնայ:

Որբախնամի Գործ. Ժողովը կառավարիչ որ «իր այս խորհրդածութեան (իմա որոշումին) հաշուակողները անձաւք կամ նախակա իրեն ղիմեն:

Զարմանալի տրամաբանութիւն. երբ ինք իր գործովը հրապարակ կուզայ, բնականաբար դիտողութիւններն ալ հրապարակային պէտք է ըլլան. ու թերթերը որ Ժողովուրդին արձագանքըն են, ապառն իրենց կողմէրը ու տգիտութիւնները յայտնելու: Ինչո՞ւ Գործ. Ժողովը այս տարրական կանոնը չգիտնալ կը ձեւացնէ:

Արդ, Հայ Ժողովուրդ,

Այսօր քու տանդ (Ազգ. Հիւանդանոցի) սեպհական սիկարի թուղթը՝ նոյն հաստատութեան մէջ ապաստանած քու որբիկներուդ ձեռքով կը պատրաստուի, անոնք կը տպեն կողքը, կը ծալեն թուղթը, կը կապեն ու տուփերու մէջ լեցնելով կը յանձնեն Հոգաբարձութեան որ ծախէ: Այս կերպով Հիւանդանոցը 1 տուփ սիկարի թուղթէն (90 տետրակ) 6 զրուշ կը շահի. իսկ Վառնայի Որբախնամի անունով հրապարակ ելած թուղթին 1 տուփէն այդ ընկերութիւնը մինակ 2 զրուշ գօմիսիօն մը պիտի առնէ ծախողէն: Ուստի, Ժողովուրդ, եթէ որբախնամին թուղթը գործածես, տուփ գլուխ 6 զրուշ փաստ պիտի պատճառես տանդ մէջ պատասպարուած 1500է աւելի կարօտեալներուն:

Որբախնամը որ ազատ երկրի մէջ է, կրնար թատրոն, նուագահանդէս, լսարան, պարահանդէս և կամ փիճակահանութիւններ յարքելով այդ 2 զրուշ գօմիսիօնէն աւելին շահիլ, մինչդեռ թուրք կառավարութիւնը Հիւանդանոցի Հոգաբարձութեան չի թոյլտարեր ատանկ բաներ

ընել, Ամերիկայի, Ռուսաստանի, Անգլիոյ, Եգիպտոսի և Թուրքիոյ մէջ ալ Որբախնամներ ունինք, բայց առանք Հիւանդանոցին կամ ուրիշ և և է հաստատութեան վնասելու ձեռնարկ մը ունեցե՞ր են մինչև հիմա: Վառնայի Որբախնամը իր տուփ մը թուղթը 2 ֆրանք 60 սանդիմի պիտի տայ ծախողին, մինչդեռ Ազգ. Հիւանդանոցը 2 ֆր. 90 սանդիմի կուտար. այս 30 սանդիմի տարբերութիւնը չենք կարծեր որ շատ երեւայ հայ վաճառողին աչքին:

Հետեւաբար, Ժողովուրդ, քու աւագ պարտականութիւնդ է գործածել միայն թուղթը այն հաստատութեան, ուր երկար տարիներէ ի վեր խնամուած են ու կը խնամուին քու որբերդ, քու եղբայրներդ, հօրեղբայրներդ, ժօրաքոյրերդ, քոյրերդ, գրագէտը, կրօնականը, նախկին հարուստը և քաջառողջը, որոնք այսօր իրենց անկարողութեանը պատճառաւ հոն ինկած ու ձեռուընին քեզի երկնցուցած «օգնութիւն» կը խնդրեն:

Մտածէ՛ ո՛վ ընթերցող որ վաղը թերեւ դուն ալ կարօտիս այն հարկին՝ ուր այսօր չարանեց բաղդին բերմամբը ապաստանած եմ մինչև իսկ ժամօնակաւ արդ հաստատութեան օգնութիւն ընող և քեզմէ շատ աւելի կարողութիւն ունեցող Հայեր:

* * *

Վերջին պահուն ստոյգ աղբիւրէ տեղեկացանք թէ Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը իմանալով Գործ. Ժողովոյ սոյն ազգայէն (?) ձեռնարկը, հրահանգ տուած է իր տեղւոյս ներկայացուցիչին, որ մէն մի տուփի գինէն 20 սանդիմ ևս զեղչելով մրցումին առաջըր առնէ: Այս հաշուով հիւանդանոցի տուփ մը թուղթը Որբախնամինէն 10) սանդիմ աւելի ապրանք կըլլայ ծախողներուն: Ու այս հաշուով Գործ. Ժողովը ալ այսուհետեւ Պուլկարիոյ մէջ սպառելիք Հիւանդանոցի թուղթի մէն մի տուփին 20 սանդիմ (40 փարայ) վնաս հասուցած կըլլայ:

Բոժ. — Ես ալ նորէն կըսեմ թէ ճշմարիտ ազգասիրութիւնը ասանկ կըլլայ:

Թերթերնիս մամուլին յանձնելու ժամանակ ստացանք հետեւեալ նամակը որ Հիւանդանոցի

Հոգաբարձութեան թուղթի մասին տուած վերջին որոշումը կը պարունակէ:

Վառնա 9 | 22 Մարտ 1901

. . . Խմբագիր

Կ. Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը նոյն հաստատութեան Որբախնոցին մէջ, որքերու մեռանք պատրաստուած սիկարի թուղթին սպառումը աւելի շատցնելու և այսպէսով հետզհետէ բազմանալու վրայ եղող երկսեւ որբերու և պատսպարեալներու ամենօրեայ բազմակողմանի պէտքերուն հասնելու համար, նորերս հրահանգած է մեզ այսուհետեւ սիկարի քոթերու տոյնը վաճառել 2 Ժրանի 70 սանդիմի, ինչպէս 2, 90ի, և խնդրած է որ տեղական թերթերու միջոցաւ զայս ծանուցանենք, ի նպատակ Ազգային այն մեծ հաստատութեան և բազմութիւ պատսպարեալներուն:

Աւելորդ է այս թղթին գնոյն վրայ եղած զեղչին հետ անգամ մ'ալ կրկնել տեսակին հինէն աւելի ազնուացած ըլլալը՝ որ ծանօթ է ամէն գործածողներուն:

Ընդունեցէք, Տիար, անկեղծ յարգանքներս:

ՏԻԳՐԱՆ ՊԻՊԵՐԵԱՆ

Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի

Վենետիկի Մխիթարեան Հարց Պատ. Միաբանութիւնը այս անգամ ալ կուտայ մեզ ԳեղՂՈՒՆԻ անունով պրակ մը, որ ՈՐԲՈՒՆԻ և ուրիշ նմանօրինակ ճաշակաւոր հրատարակութեանց պէս կուգայ գեղազարդել մեր թանգարանները:

Սոյն պրակին մէջ կը տեսնուին գունաւոր և գեղատիպ պատկերներ՝ մանաւանդ կողքին պատկերը որ կը ներկայացնէ Հայրենի կիսափուլ պարսպներ և գետեղերը մը ուր իր ցաւերովը առանձնացած ոգին Հայրենեաց՝ յուսոյ հրեշտակին երեւումէն կը սթափի: — Մէջի պատկերները կը ներկայացնեն Ծովանկարիչ Այվազովսքի իր աշխատութեան սենեկին մէջ: — Ողբերգակն Ադամեան իր Օթէլլոյի, Համլէթի և Արքայի Լիրի դերերուն մէջ: — Լեւոն Ե. ի շիրիմը: — Հայկական հարսանիք՝ ի Տարօն: — Ռէքանաթիի ազգային որբիկները: — Ռ. Պատկանեան (Քամառ Քաթիպա), իր ընտանիքը և առանձնապէս նախընտրեալ տունը. շիրիմը և անոր կուշտին բարձրացած Քամառ-Քաթիպայի գերեզ-

և 2-րդ
205-4

մանը: —Հայ բանաստեղծուհի Վիկթորիա Աղանուր: —Խտալացի տիեզերահռչակ երաժիշտ Վէրտի և ուրիշ ասոնց նման խորհրդաւոր պատկերներ որոնք գեղարուեստին պահանջած ամեն նրբութիւններով պատրաստուած են: Վեքելին ու ճաշկաւորին սիրահարը ունենալու է սոյն պրակը:

Կը ծախուի 2, 50 ֆրանք. դիմել ի վենետիկ Ս. Ղազարու վանքը, եւ կամ ի Պուլկարիա Ա. Զարպանէլեան գրատունը, Վառնա: X

ՓՈՔՐ ԹՂԹԱՏԱՐ

Տօպրիչի Խաղ. Խորհուրդին: —Հայելիի փետրւար 24 և 201 թուոյն մէջ կրկնապսակի վերաբերեալ յօդուած չի կայ:

Իրաւ է որ այդ խնդիրը շուտփող նամակ մը եկած էր մեզ, բայց չը հրատարակեցինք, որովհետեւ գրողը մեզի անծանօթ էր և 197 թիւ Հայելիի փոքր թղթատարին մէջ երկտողիւ ալ իմացուցած էինք չի հրատարակելնուս այդ պատճառը:

Հետեւաբար Ձեր պատասխանը պէտք է շրջակէք Շարժումի, որուն թիւ 291 և փետր. 3 թվականնաւ թերթին մէջ հրատարակուած է այդ կրկնապսակի խնդիրը պարզող պատահական քղաքակցիմ նամակը:

Հաճի Յ. Գ. Տօպրիչ: —Մեր թերթին մէջ Ձեզ նկատմամբ բան մը գրուած չէ. կ'սպասենք ձեր ծիծաղելի դատին:

Տ. Գ. Ֆիլիպէ: —Վերի պատասխանը դուք ալ կարդացէք:

Յ. Կ. Ճանկիւլեան Վառնա: —Անհամբեր կ'սպասենք Ձեր մեզ դէմ բանալիք դատին:

Այն օրը պիտի ըսենք ժողովուրդին թէ, «Գիտես ինչո՞ւ համար «Հայելի»-ն դատարան կը քաջուի, որովհետեւ քու Ազգ. Հիւանդանոցիդ մէջ պատսպարեալ 1500 որբ, անօգ, հիւանդ և անկեաններուն իրաւունքը պաշտպանելու քրէական յանցանքը գործած է, ու զինքը դատի տուողն ալ՝ զրկումի և անիրաւութեան դէմ մաքառողի պարծանքն ուննցող հերոս մըն է:

Հրատարակուեցաւ «Այինէի Լէթայիֆ»-ի Ա. և Բ. տետրակները: 20 տետրին բաժնեգինն է Պուլկարիոյ համար 2 ֆր. արտասահման 2ու կէֆր. կանխիկ:

ՏԵՂԵԴՔԻՐ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ.)

Բարիդ

Տիրացու Արշակ Զօպանեան որ 15 տարինեւրէ ի վեր ամենայն հլութեամբ փոքրաւորի պաշտօնը կը կատարէր իր վարպետին՝ Ա. Արփիարի քով և անոր ձեռքին կոյր մէկ գործքն եղած էր, մէկէն ի մէկ աւախսաւախութեան աստիճանին բարձրացած՝ սկսաւ իր տիրոջ դէմ անադեմայ կտրողալ:

Ա. Արփիար այս անակնկալէն բուսուլան բոլորովին կորոնցուց:

Բոժ.—Թող հոգ չընէ, Պարթեանը կրնայ գտնել առ բուսուլան:

Թ. Բազարճըզ

Աստանդաշըյիկին մեկնելէն ի վեր հոս խաղաղութիւնը վերահաստատուած է. կը նմանի այն տունին ուրկէ հեռացուցուած է կռուազան հարս մը կամ զոքանչ մը:

Մարիճա գետ

Նորին Աստվածպետականութիւնը երէկ գիշեր Պուլկարիոյ հայոց առաջնորդ կարգուած էր... երազին մէջ:

Բամաշտթա

Փըօֆուկենց Մելիքոն աղան Հայելիի հեռագրողը իրեն իմացնողին տուի մը բաբիրոս (պատրաստ սիկար) նուէր տալ խոստացաւ:

Բոժ.—Մէկ տուիք քիչ է, երկուք տալու է որ գտնուի (?):

ԱՁԴ

Բարեյիշատակ եղիազար Մուրատեանի հեղինակած «Բնական Պատմութիւն Արշակ Բ.ի և անոր Պապ որդւոյն» անուն երկասիրութիւնը այս անգամ լոյս տեսած է Աեքսանդրիոյ «Արաքս» նորահաստատ տպարանէն և կը ծախուի ի գին 2½ ֆրանք: Պուլկարիոյ և Ռումանիոյ մէջ ստանալ փափագողք դիմելու են մեր խմբագրութեան:

ՉԱՐԱԿԱՄ ՄԱՅՐ ՄԸ

Չորս տարի է ի վեր քաղաքիս մէջ հաստատուած էին գաղթական այր մը և կին մը իրենց մէկ հատիկ աղջիկովը: Ասոնք ի խնայողութիւն իրենց տունը կընդունին Խ...Մ... եան անուն երիտասարդ մը իբր քառօնիէն, որ աղջկան հօրը հետ մէկտեղ կաշխատի հաստատութեան մը մէջ:

Երիտասարդը որ երեք տարիներէ ի վեր ասոնց քովն էր, կը յաշուի աղջկան սիրտը գըրաւել ու վերջապէս կը համարձակի ձեռքը խնդրել անոր ծնողքէն: Աղջկան մայրը՝ տիկին Ն... սիրով կընդունի սոյն առաջարկը սա պայմանաւ որ գէթ 1-2 տարի ալ սպասէ, վասն զի աղջիկը պզտիկ է: Երիտասարդը կը համակերպի: Այս միջոցներուն տիկին Ն... ծանրապէս կը հիւանդանայ և կորոշուի դարմանուելու համար զայն Կ. Պոլիս զրկել, բայց որովհետեւ նիւթական այնչափ կարողութիւն չունէին, երիտասարդը՝ Խ...Մ... եան վեհանձնաբար կուտայ երթ ու դարձի ծախքը ու տիկին Ն... Պոլսէն ողջ առողջ կը վերադառնայ:

Գիշ ժամանակ անցնելէն ետքը երիտասարդը իմանալով որ տիկին Ն... իր աղջիկը ուրիշ երիտասարդի մը տալու կը միտի, բացատրութիւն կը պահանջէ. տիկինը կը պատասխանէ թէ որոշած է իր աղջիկը մուսակագործի մը տալ և հետեւաբար այն օրէն սկսեալ ինքը պարոն Խ... պէտք է ուրիշ տեղ մը հաստատէ իր բնակութիւնը: Պ. Խ... որ 3 տարիներ հաւի պէս փեթտուած էր աղջկան մօրմէն, հակառակ իր կամաց տունէն կը վտարուի ու աղջիկը կը նշանեն մուսակագործին հետ: Հարսնիքը կորոշուի Ս. Սարգիսին կատարել: Խեղճ աղջիկը, բնութեամբ երկչոտ, բնապետ մօրը գէմը կը դողայ ու հարսնիքին մօտենալը տեսնելով կը հալի ու կը մաշի: Մնունգին Բ. օրը, իւր ապագայ կեսրոջ ձեռքը համբուրելէն վերադարձին կը յաշուի ինքզինքը պաշտպան բարեկամի մը տունը նետել: Մայրը կսկսի պոռալ կանչել. «Խ... երիտասարդը աղջիկս փախուց» և այլն ըսելով քաղաքն ու ոստիկանութիւնը ոտք կը հանէ, ձերբակալման հրամաններ կը տրուին մինչեւ իսկ փոքր գիւղերուն. իրողութիւնը սա էր որ օրիորդը իր մօրը տունէն միայն 100 քայլ անդին գացած էր, ուր կը գտնուէր իր պաշտելի Խ... երիտասարդը: Ոստիկանութիւնը առաջին հարցաքննութենէն ետքը ազատ կը թողու երիտասարդը: Երկու օր վերջը Այցելու Հովիւ հայրսուրբին, քահանային և Թաղ.խորհրդոյ ներկայութեանը օրիորդը կը խոստովանի թէ իր

յօժար կամբովը կընդունի Խ... երիտասարդը իբր ամուսին:

Աղջկան հայրն ու մայրը կը պահանջեն Հայրսուրբէն որ աղջիկին Փրկիչ զրկուի զգաւտանալու (?) համար. հայրսուրբը դիտել կուտայ թէ այդ ժամանակները անցած են և հաշտութեան կը յորդորէ, բայց տիկին Ն... որ անմխիթար էր մուսակագործին մերժուելուն պատճառաւ, ինքզինքը խելակորոյս կը ձեւացնէ «բռնեցէ՛ք, աղջիկս կը տանին կոր, կը բերեն կոր, թիւթսիւ ըրէք, կոնակին եաղ քսեցէք» և այլն ըսելով կը զառանցէր:

Վերջապէս, հաշտութեան համար բարեկամաց բարեխօսութիւնք անօգուտ կը մնան. ու Ս. Սարգիս կիրակի իրիկունը պսակի արարողութիւնը կը կատարուի ի ներկայութեան խուռն բաղմութեան Տիար Ա...Մ... ի բնակարանին մէջ ուր կը բնակին այժմ տէր և տիկին Խ...Մ...եան: Իսկ մուսակագործը սոյն ամուսնութեան Բ. օրը քաղաքէն կը մեկնի Աղեքսանդրիա, մեծ ցաւ պատճառելով... տիկին Ն... ի:

(Բոժ.—Աստուած մխիթարէ):

Փ. Պօլիս

Յ. Պ. Ն.

Սոցիալական վճիռ մը

Սոցիալական իմաստուն բնաւ միտքէն չէր անցըներ՝ տղայ մը մօրը վերադարձուցած օրը, որ շատ դարեւ վերջը ինքը պատճառ պիտի ըլլար կին մը իր ամուսնոյն վերադարձուելուն: Եւ մանաւանդ բնաւ չէր կրնար գուշակել որ գործն ալ Չինաստանի մէջ տեղի պիտի ունենար: Երեւակայեցէք Բէքինի մէջ երեք անձ խիստ գեղեցիկ կին մը կը սիրէին: Իրենց զգացումները այնքան անկեղծ էին որ, երեքն ալ զիրենք այդ կնոջ իբր ամուսինը կը ներկայացնէին:

Բառնալու համար անպատեհութիւններ՝ որոնք կրնային ծագիլ, Մանտարէնի մը առջեւ գացին որպէս զի վճիռ տայ: Մանտարէնը նախ և առաջ չփոթեցաւ: Պարագան արտակարգ էր բայց գուշակուածին հակառակ ինք հետեւեցուց թէ «ճշմարիտ ամուսինը այն է որ ամենէն անշահախնդիր սիրով կը սիրէ այս կինը»:

—Ուրիմ, մտածեց ինքնիրեն, այս կինը պէտք է մեռած ձեւացնել, ճշմարիտ ամուսինը անշուշտ այն մարդը պէտք է ըլլայ, որ ամենէն աւելի վշտացած պիտի երևայ:

Ուստի քնացուցիչ ըմպելիք մը խմցնել տրւաւ կնոջ, ու կանչեց երեք մարդիկը, Անոնցմէ առաջինը ներս մտաւ, և երբ մահուան լուրը առաւ, չուզեց իսկ մեռեալը տեսնես. երկրորդն

ալ նոյնպէս ըրաւ. Իսկ երրորդը ներս մտնելով սկսաւ լալ և ուզեց դռնէ զայն թափել. Այն ա-տեն Մանտարէնը կինը թմրած վիճակէն հանեց և իր ամուսնոյն ներկայացուց, որ աւելորդ է ըսել թէ շատ ուրախացաւ:

Սիկիլիոյ արխանոս անձրեւը. — Իտալիոյ փա-յերմօ քաղաքէն կը գրեն Բառի-Նուվէլի թէ «Երկու օրէ ի վեր կարմիր ամպ մը քաղաքին վրայ կը տիրէ: Երկինքը խիստ կարմիր է և հա-րաւային սաստիկ հով մը կը փչէ: Կաթիլ կա-թիլ իյնող անձրեւի շիթերը կը նմանին չորցած արիւնի: Այս երեւոյթը որ արիւնոտ անձրեւ կան-ուանուի, հետեւանք է այն աւազին որ քամին կը բերէ Ափրիկեան անապատներէն:

Նոյնանման երեւոյթ մը կը տեսնուի ամ-բողջ կղզւոյն մէջ:

Ծ Ի Ծ Ա Ղ

Երկու բարեկամներ.

— Ան չէ ամա, ի՞նչ կընես կոր.

— Ես, ոչինչ. իսկ դուն.

— Ես ալ նմանապէս.

— Զարմանալի բան. այս առաջին անգամն է որ երկուքնիս միեւնոյն գործը կընենք:

— Պարո՞ն, դուք աղջկանս ձեռքը կը խնդ-րէք ու սանդիւմ մ'անգամ չունիք գրպաններդ.

— Ճշմարիտ է.

— Ու և է ապագայ յոյս մ'ալ չունիք:

— Ո՛չ, պարոն.

— Իմ աղջիկս ալ նոյնպէս. ուրեմն կրնաք իրարու հետ ամուսնանալ:

Էրեկը. — Ի՛նչ, 2500 ֆրանք տուիր քեզ բռնող գողերուն.

Կինը. — Այո՛, ինչո՞ւ կը զարմանաս. երբ զիս բռնեցին կեանքդ կամ քսակդ ըսին. ես ալ քսակս իրենց տուի:

Էրեկը. — Բայց սիրելիս. շատ սուղ գնեցիր ինքզինքդ, ինձ համար աւելի լաւ էր կեանքդ տայիր քան դրամը:

Երկու ընկերներ գինետան մէջ

— Բայց, բարեկամ, աս ամենը դուն պիտի խմես. ինձի բան մը չպիտի ձգես.

— Ի՞նչպէս... վճարումները պիտի ձգեմ ձեզի:

— Ա, ամուսնացա՛ր, որո՞ւ հետ.

— Զարմանալի բան. որո՞ւ հետ մի, կնոջ մը հետ.

— Կը ծաղրես կոր զիս. տեսա՞՞ք ես մէկը որ ամուսնանայ էրիկ մարդու մը հետ.

— Այո՛, իմ կինս:

Գթասիրտ պարոնը. — Ծօ՛, ատ ի՞նչ է, ես մինչեւ հիմա քեզ կոյր կը կարծէի.

— Բայց այո՛, պարոն.

— Ի՞նչպէս կըլլայ որ այսօր աչքերդ կը տեսնեն.

— Այսօր արձակուրդի օրս է...

Դատաւորը. — Ինչո՞ւ համար ամուսնալուծու-թիւն կը պահանջէք.

— Որովհետեւ կինս խոստովանեցաւ թէ ու-րիշ մը կը սիրէր, և դիտելով հաստատեցի որ իրաւ էր:

— Բայց երբ ձեզի ճիշդն ըսած է, ուրեմն ձեզ խաբած չէ:

Տիկին Պ. հացկերոյթի հրաւիրուած էր իր Կ... բարեկամուհիէն որուն ամուսնոյն ականջ-ները քիչ մը ծանր էին:

Սեղանին վրայ տանտիրուհին ամուսնոյն ա-կանջն ի վար ըսաւ.

— Արդարեւ սա տիկին Պ...ն շատ հրա-չագեղ է.

Ամուսինը կարծելով որ ապուրին համար կը-սէ, պատասխանեց. — Իրաւ է որ այդպէս է, սա-կայն քիչ մը պաղ է:

Փոքրիկն Մարիամ դառնապէս կուլար: Դը-րացի տիկին մը անոր ըսաւ.

— Մարիամ, շատ մի՛ լար. որովհետեւ երբոր մեծնաս տգեղ դէմք մը կունենաս:

— Կերևայ թէ դուն պզտիկ եղած ժամանակդ շատ լացեր ես, պատասխանեց Մարիամ խըն-դալով:

ԻՍԿՈՒՀԻ ՏՈՒՏՈՒ

Իսկուհի տուտուն ասկէ առաջ օր մը շուկայէն անցած ատեն, պատրաստ հագուստի վաճառատան մը դրանը մէջ շարուած արուեստական մարդոց դիմելով, բարեկամի մը խանութը հարցուցած էր, բայց պատասխան չառնելուն վրայ բարկացած՝ նոյն փայտէ արձաններէն մէկը հրելով կոտրած էր դրան խոշոր ապակին, որուն փոխարէն $1\frac{1}{2}$ ֆրանք տուած էր:

Այս փորձով հասկցած ըլլալով որ այդ հագուած փայտէ արձանները վաճառատան մէջ գըտնուած հագուստներուն ձևը, կերպասը և այլն ցոյց տալու համար դրուած են, անցեալ օր ալ շուկայ ելլելով դարձեալ նոյն վաճառատան առջևէն անցած ատեն, հետաքրքրութենէն դրան առջևի հագուած նոյն արձաններէն մէկուն հագուստը կը շոշափէ, բայց այս անգամ հակառակը կը պատահի. այդ լաթերը հագնողը վաճառատան առաջին պաշտօնեան էր որ Իսկուհի տուտունին շոշափումները տեսնելով կը գոչէ.

—Նէ՛ իսթէր, մատամ, սէն խըրսի՛ղ:

—Վա՛յ կըլխուդ, դահիճ շուն դուն ալ, պէն սէնի ետքմա ատամ զանն էթտիմ տէ գումաշընա պագտըմ. նէ՞ օլտու, բարչասը գօրմաստը եա՛:

Ծօ կարապետ, ճէպէրդ պիւթիւն ծակեր է.
—Է ի՛նչ կըլլայ. բարա չունիմ քի հոգ ընեմ:

—Բարա չունիս նէ ինտո՞ր գօրթէզանու թիւն կընես:

—Անիկա փարայով չըլլար, խաթ մը լաթով կըլլայ:

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

Պիր գարը գօճա

—Ա՛լ չու էքմէքլէրի.

—Աման ճանըմ, պու նէ՞ տիր. չամուր կիպի, հէմ տէ նէ՞ գատար սիեաչ.

—Ագչամ լամպայը եագմատան եէրիզ տէ՛ սիյահլըղը կէօրիւնմէզ.

—Էյի ամա, պու էքմէյի պիր տիւրլիւ հազմ իտէմէյօրում.

—Ազ եէրսէն՝ հէմ հազմի գօլայ հէմ տէ իտարէ օլուր:

—Ճանըմ, գարչըքի գօմշունուն էվինէ կէ-

լէն պէյազ էքմէքլէրի կէօրտիւքճէ հէյրան օլույօրում.

—Ա՛ գուզում օնուն բարթիյասը գազանտը տա օնուն իչիւն պէյազ եէմէյէ պաշլատը. բարթիյասը տիւշէրսէ՛ աղ աթար գըլլարա, պէլքի պու սիյահ էքմէյիտէ զօրնա եագալար:

Իքի արգատաշլար տէնիզ եօլնուլուղու իտէր իքէն.

—Եահո՛ւ, չու պաշ թարաֆընտաքի եիւքսէք մէվգըյէ չըգըպ եաթսանա՛:

—Փրթընատան գօրգարըմ.

—Վա՛յ, սէնի տէնիզ թութա՞ր մը.

—Տէնիզ պէնի թութմազ ամա՛ իչինէ տիւշէրսէմ պէն տէնիզի թութարըմ տէյի գօրգարըմ:

Գէորդ աղա, ճաքէթիւնիզի քիմէ՞ եաբտըրտընըզ.

—Մալիւմ ա՛, պէն տայիմա մէմէքէթիւն պիրինճի թէրզիսինէ եաբտըրըրըմ.

—Փէնա տէյիլ ամա, թալեօոու պիր աղ ուզուն օլմուշ.

—Ձարար եօգ. պիզ տէ օնա բարա վէրմէյի ուզաթըյօրըզ:

Տօքթօր, էօքսիւրիւյիմ վար, փարամ եօգ, նէ՞ իլաճ իչէյիմ.

—Մաաէմ քի փարամ եօգ տէյօրսուն, ագչամ սապահ պիրէր ֆինճան կազ իչէրսէն կէչէր:

—Էյ կէվչէքլիք եագալարսամ նէ՞ եաբալըմ:

—Արա սըրա պիր աղ ֆիթիլ եուտարսըն:

—Տէսէնէ՞ միտէմէ պիր տէ շիչէ ույտուրսամ, տօնանմա կէճէսինտէ էրէյի իշ կէօրիւրիմ:

—Մանում աղա, Ձատիկիւք պանա պիր գաթ էլպիսէ վէրէճէքսին.

—Պաշ իւսթիւնէ:

—Փագաթ, վէրէսիյէ վէրի՛րմիսին:

—Վէրիւրիմ, նիչի՞ն վէրմէմ.

—Հա՛նկը կիւն կէլիպ ալայըմ:

—Էվվէլքի ալտըզլարընըն պէտէլինի կէթիրէճէին կիւն:

ԹԵՐԹՈՆ ՀԱՅԵԼԻ (10)

ԹԵՐԹՈՆ ԲՈՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ԿԱՐԹԱՐ-ՄԱՍԹԱՆԵ)

Ը.

Սօլ-Պրոտէի անուշահոտ վարագոյրին նկեր

Վարդ, ինչպէս կերելի, բնաւ ճշմարտութիւնը չէր ըսած Չուին: Հանդիպակաց տան մէջ, ընդհակառակն, ոչ ոք կը մտածէր ունոր վրայ:

Այս տան մէջ, որուն երկու երեք պատուհանները միայն փողոցին վրայ կը նայէին, ինչպէս սովորութիւն է գրեթէ ամենուրեք ի Չինաստան, կը բնակէին դեռ մանկամարդ կին մը, թէեւ Լիու-Սիուի մայրն ըլլար: Ամուսինը, արդէն մէկ բանի տարիներէ ի վեր մեռած, պատուաւոր վիճակ մը թողած էր իրեն, և որովհետեւ, Միջին Կայսրութեան մէջ՝ պարկեշտ կիները չեն վերամուսնանար երբեք, տիկին Լիու ինքզինքն ամբողջովին յատկացուցած էր իր միակ գաւկին դաստիարակութեանը, Ամեն նկատմամբ կաարեալ աղջիկ մըն էր ըրած զայն:

Գէթ այս կողմէ բան մը չէր չափազանցած Վարդ: Սօլ-Պրոտէ ամբողջ նահանգին ամենէն սիրուն աղջիկն էր իրօք: Ասկից զատ, բնաւորութիւնը գեղեցիկ էր և իր միտքն օժտուած՝ որքան որ կը ներքին այդ երկրին օրէնքները, ուր կիները, գուցէ իբրեւ խոհանութիւն, համեմատական տգիտութեան մը դատապարտուած են:

Կը բաւէ որ գիտնան կարգալ, գրել, նկարել եւ ասղնեգործել, ա'լ ուրիշ բան չպահանջուիր:

Մարգարիտներու գետին եզերաց վրայ դեռ երկարատեն չպիտի խորհուրդ աղջիկները բժշկուհի փոխել: Նախամեծար կը համարուի մեծցունել զանոնք այնքան որ պարկեշտ ամուսիններ և բարի մայրեր ըլլան:

Ուստի, տիկին Լիու գրեթէ առանձին կապեր իր աղջկան հետ, վասն զի ազգական չունէր քաղաքին մէջ բաց ի Խ-Թէ եղբորորդիէն, զոր շատ կը սիրէր և միշտ ուրախութեամբ կընդունէր:

Այս եղբորորդին բնաւ երկու տարեկան գեղեցիկ երիտասարդ մըն էր, մատաղ հասակէն որք մնացած, որ, տեսնելով թէ հարստութիւն չունի, գլուխը դրած

էր դրագետ մը ըլլալ, ասպարէզ որ, ինչպէս յայտնի է, Չինաստանի մէջ կառավարողէ ամենաբարձր պաշտօններու:

Շնորհիւ իր հօրաբոր, որ ուսմանցը մէջ օգնած էր իրեն, առջին բնութիւններն այնքան լաւ անցուցեր էր որ հակառակ իր փոքր տարիքին, արդէն Լիու-Սիուէն էր, աստիճան որ իրաւունք կուտար իրեն կրել տրոյէ գնդակիկ:

Այս առաջին յաջողութիւն թոյլ կուտար իրեն աստղաբաշխութիւն դասախօսել Միի մեհանին մէջ:

Մինակ, դիտելով հանդերձ աստղերը, Խ-Թէ աննշտան չէր անցուցած երկրի վրայ իր շուրջն եղածները. և ընդունուելով Սօլ-Պրոտէի մօր կողմէ մտերմօրէն, բնականապէս սիրահարած էր իր զարմուհիին:

Բայց տիկին Լիու պատեհ ժամանակին նշմարեց այս նորածին տարփանքը և որովհետեւ մայրական օրինաւոր հպարտութեամբ մը, իր աղջկան համար աւելի փայլուն ամուսնութիւն մը կերպէր, հասկցուց խեղճ Խ-Թէի թէ երբեք իր փեսան չպիտի ըլլար:

Երիտասարդն ակնածանօք համակերպեցաւ այս որոշման, որուն անդամ ըլլալը գիտէր. յաղթելու համար իր սիրուն, ամեն ժամանակեւ աւելի վերսկսաւ աշխատել, և ա'լ անկից ետքը շատ քիչ անգամ դուրս ելաւ մեհանէն:

Միի այս մեհանը՝ ուխտագնացութեան նշանաւոր վայր մըն է:

Նահանգին ամեն կողմերէն հոն կը վազեն: Հարուստ և աղքատ կաղօթին հոն Ձէնի. առաջիններն իրենց երջանկութեան շարունակութեանը համար, միւսներն իրենց թշուառութիւններուն վերջանալուն համար:

Օր մը, երբ տիկին Լիուի եղբորորդին կաւարտէր իր ուխտերը և դուրս կելլէր, խորանին առջեւէն անցած միջոցին աչքին զարկաւ մարդու մը ջերմեռանդօրէն աղօթելը:

Անձանթը աշնուական անձ մըն էր. երեւոյթէն յայտնի էր, և մեղմաձայն կաղօթէր, որով Խ-Թէ կըրցաւ լսել որ կաղաչէր Պուտտին՝ արժանաւոր ընկերուհի մը գտնել իր գաւկին:

Արդ՝ ամուսնութիւն բառը, գրագետին միտքին մէջ ցաւադին յիշատակ մը ծնուցանելով ակամայ, սիրեցեալ անուն մը կը բերէր միշտ անոր շուրթերուն վրայ. Սօլ-Պրոտէին անունը, Սօլ-Պրոտէն որուն ամուսինն ըլլալ չէր երազեր այլ եւս, բայց որուն համար երջանկութիւն կուզէր:

Այն տան, ինքնաբերաբար, անձնուէր սիրտերու

պարզ և ճշմարիտ դիւցազնութեամբը, ուխտաւորին մօտեցաւ և մեծարանօք ողջունելէ ետք, ըսաւ .

— Տէր, իմացայ ձեր փօթքը . Ձէն անշուշտ կուզէր որ այնպէս ըլլայ, քանի որ ես կրնամ լսելի ընել զայն :

— Դո՛ւք, ի՞նչպէս, հարցուց օտարականը զարմացած և հետաքրքրութեամբ դիտելով իր խօսակիցը :

— Ե՛ս ինքս :

Եւ իր ու՛ր ըլլալն յայտնելէ յետոյ, Լիու-Սիուի վրայ խօսեցաւ, ըսելով որ անիկա ունէր բոլոր այն հըրապոյրներն ու առաքինութիւնները զորս իր զաւկին կը նոյ՛ր համար կուզէր : Նոյն իսկ անանկ եռանդով մը որ օտարականը չկրնաւ զսպել ինքզինքը, ըսաւ ժպտելով .

— Պատուական ազգական մօրեղբորդդին էք, ինչո՞ւ հետը չէք կարգուիր :

— Բաւական հարուստ չեմ, պատասխանեց Ի-Թէ կարմրելով : Արդէն մտադիր եմ ամբողջ կեանքս ուսման նուիրել :

— Այդ ուրիշ, չնորհակալութիւնս միայն կրնամ յայտնել : Այսօր իսկ մարդ պիտի զրկեմ Տիկին Լիուի՝ իր տունը ներկայանալու թոյլտուութիւն խնդրելու համար, և եթէ իր ազնիւ ձեր նկարագրածին պէս է, յոյժ երախտապարտ պիտի ըլլամ ձեզ, վասն զի զաւկիս համար ամուսնութեան պիտի խնդրեմ : Անունս է Լէնկ-Թիէն-Լս եւ Հօբբօի անդամներէն մէկն եմ : Ըսել կուզեմ որ եթէ այս ամուսնութիւն տեղի ունենայ, իմ բոլոր վարկս պիտի վայելէք :

Հօբբօն քանդոնի մէջ առեւտրական յոյժ հարուստ եւ յոյժ զօրեղ ընկերութիւն մըն էր որ հարաւի գաւառներուն մաքսային հասոյթները կը գանձէր, թէյի վրայ գիներու բարձրացում և նուազում կը կատարէր :

Այսքան մեծ անձնաւորութեան մը հետ այդքան համարձակօրէն խօսելուն քիչ մը ամօթահար, երիտասարդ գիտունը ներում խնդրեց, իր հօրաբորջ հասցէն տուաւ և մեկնեցաւ յարգանք խոնարհելով, բայց աչքերն արցունքով լեցուն :

Համակ անձնաւորութեան զգացումէ մը մղուելէ ետք այդ արարքին, չէր կրնար չմտածել թէ իր իսկ ձեռքովը անանցանելի պատուար մը պիտի կանգնէր իր և իր սիրեցելոյն միջեւ :

Ուստի վերջին անգամ մըն ալ ուզեց տեսնել տիկին Լիուն և իր ազնիւ, առաջինին պատմելու համար Միի մեհեանին մէջ պատահածը եւ յաւիտենական հրաժեշտ տալու համար երկրորդին :

Հօրաբորջ տունը չգտնելով, յաջորդ օրը նորէն

գնաց : Այս երկու այցելութիւններն են որ այնքան սաստիկ գրգռած էին Չուի նախանձը :

Սակայն, հարուստ Լէնկ վայրկեան մը իսկ չկորսնցուց . Ի-Թէի հետ տեսնուելէն քսանըջօրս ժամ ետքը, վստահելի մէյ-Ժին մը զրկեց Սօլ-Պրոտէի տունը, եւ տասնըհինգ օր յետոյ երկու ընտանիքներն համաձայնած էին . Լիու-Սիուի և Լէնկ-Թա-Լանկի ամուսնութիւնն որոշուած էր :

Փեսին հայրը սքանչացած էր մանկամարդ աղջկան վրայ, և իր որդին, որ սովորութեան համեմատ չէր կրնար իր նշանածին երեսը տեսնել, հաւատ ընծայած էր հօրը խօսքին : Անհամբուրութեամբ կը սպասէր որ հարսնիքին օրը որոշուի :

Գալով Սօլ-Պրոտէի, հպատակութեամբ ընդունելէ ետք ամուսինը զոր մայրն իրեն կառաջարկէր, երբեմն խղճելով հանդերձ վիշտի ամբիժ հաւաք մը՝ թերեւս իր զարմիկին վրայ մտածելով, Եւսի իբրեւ ճշմարիտ աղջիկ, իր հարսանեկան պատրաստութիւններն ըրաւ, մինչ սիրառօշոր մսավաճառը, ինչպէս տեսնեք, կ'օրօրուէր Վարդի կողմէ եւ կերպզէր թէ ի մօտոյ իր դուստրուհիին ամուսինը պիտի ըլլար : Գիտենք թէ ինչ եղաւ իր զարթնումը եւ անոր յաջորդող սոսկալի տեսարանը :

Սակայն, տխուր յայտնութեան յաջորդ օրը, Չու ըստ սովորականին բացաւ իր խանութը և յաճախորդները չկրցան գուշակել անոր չարաշարժները, այն աստիճան կրցաւ դէմքը անալալլ պահել, բայց Մէ-Քուի բնաւ չյանդգնեցաւ անոր ներկայանալ, վասն զի ապահով էր որ իբր տիրուհիին ամուսնութիւնը ծանուցանող կարմիր ազդը զարկած էր անոր աչքին, ուստի կը վախնար մսավաճառին զայրոյթէն :

(Շարունակելի)

Խ. Գ. ՀԻՆՏԼԵԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պոլկարեհեմ լեզուի

Գին 1 ֆր.

Դիմել Հայելիի խմբագրութեան :

Печатница „Взаимность“ — Варна